փոգ-սուլթան Ուսթաջլուի միջև։ Այդ հողի վրա ծայր են առնում միջցեղային կռիվները, որոնք գնալով ավելի են բորբոքվում, պատճառ դառնալով մեծ ավերածությունների։

Ընդհարումները շարունակեցին մինչև 1527 թ. երբ Գիլանից Քյոփուգ-սուլթանը, ուսթաջլու կըզըլբաշների գլուխն անցած, արշավեց նախ Արդաբիլ և ապա Թավրիզ, բայց լսելով, որ Դիվ-սուլթանը Զովհե-սուլթան Թաքալուի հետ մեծաքանակ զորքով գալիս է ընդառաջ, խուսափեց նրանց հանդիպելուց և կես ճանապարհից ուղղություն վերցրեց դեպի Երևան։

Այս փաստը ևս վկայում է, որ Դիվ-սուլթանը նաև Զուխուր-Սա'դի վիլայեթի տերն էր, քանի որ Քյոփուգ-սուլթանը փոխանակ նրա դեմ ճակատելու, հարմար գտավ ասպատակել ու կողոպտել նրա երկիրը։ Բայց Դիվ-սուլթանը կարողացավ կանխել այդ և արագ երթով հետապնդելով հակառակորդին, դեռ Երևան չհասած, Շարուրի դաշտում հարկադրեց նրան ճակատամարտ տալ, որտեղ, չնայած համառ դիմադրությանը, ուսթաջլուները ջախջախիչ պարտություն կրեցին։ Մարտում զոհվեց նաև Քյոփուգ-սուլթանը։

Սակայն Դիվ-սուլթանին վիճակված չէր վայելելու այս հաղթանակի պտուղները։ Երկու տարի անց՝ Թաքալու ցեղի առաջնորդ Զովհե-սուլթանին հաջողվում է սադրանքով սպանել տալ նրան և գրավել պետության խնամակալի պաշտոնը[14]։

Այս կարևոր պաշտոնի գրավումը մեծ չափով ամրապնդեց Թաքալուների դիրքերը սեֆևիների պետական վարչական կազմակերպության մեջ։ Շուտով Ազերբայջանի կուսակալ նշանակվեց Ուլամա Թաքալուն և իշխանության առաջին իսկ օրերից սկսեց մեծ հավակնություններ դրսևորել։ Իշխանական իրավունքների չարաշահումը վերջինիս կողմից առիթ հանդիսացավ, որպեսզի կըզըլբաշ ավագանին երիտասարդ շահին դրդեր թշնամական դիրք գրավելու Թաքալուների նկատմամբ։

1531 թ. Թաքալուների դեմ կիրառվող դաժան հալածանքների ու ճնշումների հետևանքով, Ուլամա Թաքալուն ապստամբեց և կողոպտելով Թավրիզում գտնվող արքունի ստացվածքները, ապաստանեց Թուրքիայում[15]։ Սուլթան Սուլեյմանը Ուլամային տվեց Բիթլիսի էյալեթը, որն այն ժամանակ գտնվում էր ամիր Շարաֆի ձեռքում։ Վերջինս ստիպված եղավ փախչել Իրան, շահ Թահմասպի մոտ։

Այս դեպքերը առիթ հանդիսացան երկու երկրների միջև ավելի քան երկու տասնամյակ շարունակվող ավերիչ պատերազմների, որոնք ընդհատվեցին միայն 1555 թ. Ամասիայում կնքված հաշտությամբ։ 1531—1555 թթ. ավելի շատ ավերվեցին Արևմտյան Հայաստանի Բասենի, Խնուսի, Կարնո, Բաբերդի, Երզնկայի, Դերջանի, Մուշի, Խլաթի, Արծկեի, Արճեշի և Վանի շրջանները, որոնք մի քանի անգամ ենթարկվեցին կըզըլբաշ զինվորների ասպատակությանը[16]։ Արարատյան երկիրն այս բախումների ժամանակ համեմատաբար քիչ տուժեց։

Հետևելով երկուստեք ձեռնարկվող ասպատակությունների ընթացքին,

---

14 Թազքարե-յե շահ Թահմասպ (պարսկ. բնագիր), Կալկաթա, 1912, էջ 9, հմմտ. Հասան-բեկ Ռումլու, էջ 199, 205, Իսքանդար Մունշի, հ. I, էջ 48։

15 Թազքարե-յե շահ Թահմասպ, էջ 16։

16 Նույն տեղում, էջ 37—60։